Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի N 4 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Առարկա Տեխնոլոգիա

Թեմա՝ Անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը

Վերապատրաստող,մենթոր՝ ԱրմենուհիՄելքոնյան

Ուսուցիչ՝ Հասմիկ Սարգսյան

2023

Բովանդակություն

Ներածություն……...3

Արդիականությունը……5

Նպատակը, խնդիրները…….5

Գլուխ 1.1 Անհատական ուսուցման պլան……..6

1.2 ԱՈՒՊ-ի լրացման կարգը……....7

1.3 Խորհուրդներ ԱՈՒՊ-ի անդամների…….8

Գլուխ 2.1 ՈՒսուցիչների աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ……9

Գլուխ 3 Ընտանիքի դերը ներառական կրթության մեջ……..……..……..…12

Եզրակացություն……..…16

Գրականության ցանկ…….....17

Հավելված……18

Ներածություն

Այսօր աշխարհում կա մտավոր կամ ֆիզիկական հաշմանդամությամբ մոտ կես միլիարդ մարդ: Այդ անձինք հաճախ սահմանափակված են ինչպես ֆիզիկական, այնպես էլ սոցիալական արգելքներով, որոնք մեկուսացնում են նրանց հասարակությունից և հնարավորություն չեն ակտիվորեն մասնակցելու իրենց երկրի զարգացմանը: Հաշմանդամների մոտ 80 տոկոսն ապրում է զարգացող երկրներում: Այս ներուժը ուղղորդելու և իրացնելու բանալին մարդկանց մտածելակերպում է. վիճակը փոխելու համար անհրաժեշտ է կրթել հասարակությանը և սերմանել հարգանք բոլոր մարդկանց իրավունքների հանդեպ: Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալ է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է համալրվեն բոլոր սովորողների՝ զարգացման հապաղումներով, արատներով և առանց դրանց, անհատական պահանջմունքներին: Սակայն, ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես, երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ժամանակակից կրթության զարգացումը համաշխարհային մակարդակի, բազմակողմանի,լայնամասշտաբ գործընթաց է: Կրթությունը անընդհատ վերափոխվում է, կատարելագործում բովանդակությունը՝ձգտելով մոտենալ տեխնիկական և տեխնոլոգիական հեղափոխության արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Համաշխարհային

մանկավարժության և դպրոցի զարգացման կարևոր դրական միտումներից են կրթության հումանացումը, անձնակողմնորոշված մոտեցման ապահավումը: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մանկավարժական գիտությունը ժամանակակից հասարակության զարգացման կարևոր գործոնն է, որը պետք է ապահովի կրթական համակարգի փոխակերպումը նոր պայմաններին համապատասխան:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության կրթության կարևորագույն հիմնախնդիրներից և բարեփոխումներից է համարվում ներառական կրթությունը: ՀՀ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության մասին օրենքը ընդունվել է 2005 թվականին, որից հետո ներառական կրթությունը ընդգրկվեց կրթության զրգացման պետական ծրագրերի մեջ:

Ներառական կրթություն (ֆր. `Inclusif-ներփակված,)կրթության համակարգ, որն ուղղված է հավասար կրթության ապահովմանը և հասարակության մեջ համանդամություն ունեցող մարդկանց ներգրավվածության ապահովմանը:Այն ավել մատչելի է դարձնում կրթությունը բոլորի համար:

Ներառական կրթության կայացումը առողջ հասարակության ձևավորման կարևոր նախապայմաններից է, քանի որ այն ենթադրում է հասարակության յուրաքանչյուր օղակի լիարժեք ընդունում և հնարավորությունների օգտագործում:

Հայաստանի Հանրապետությունում ներառական կրթությունը ապահովում է յուրաքանչյուր երեխայի կրթություն ստանալու իրավունքը: Ներառական կրթության նպատակը յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության և որակի ապահովման գործընթացին է ուղղված:

Ներառական կրթությունը՝ յուրաքանչուր երեխայի համար, այդ թվում ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարագացման առանձնահատկություններին համապատսխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական ծրագրին առավելագույնս մասնակցելու գործընթացն է՝ըստ հանրակրթության պետական չափորոշչի: Այս համակարգը թույլ է տալիս կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող երեխաների կրթությունն ու դաստիրակությունը իրականացնել առանց երեխային ընտանիքից կտրելու՝ միաժամանակ ապահովելով երեխայի կրթությունը հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Ներառական կրթությունը նպաստում է հասարակության բոլոր անդամների հնարավորությունների հավասարեցմանը, նոր հարաբերություններ և ստեղծագործական հնարավորություններ որոնք անցյալում անհնար էին: Ներառական կրթությունը մարդու իրավունք է, այն ապահովում է լավ կրթության և սոցիալական առումով հիմնավորված է:

Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը, հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդումություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունք է: Այն արձագանում է բոլոր սովորողների բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և ԿԱՊԿ-ի կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտություների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթության կայացումը առողջ հասարակության ձևավորման կարևոր մասերից է, քանի որ ենթադրում է հասարակության յուրաքանչյուր օղակի լիարժեք ընդունում և ներուժի օգտագործում: Հայաստանում կրթության ոլորտի զարգացման գործում նոր և կարևորագույն շրջան սկսվեց ներառական կրթության ներդրումից հետո, քանի որ կրթության կազմակերպման հինաքարը մարդասիրական ավելի խորը ու հիմնավոր գաղափարների ներդրումն է:

Թեմայի արդիականությունը

Աշխարհի մի շարք երկրներում, որտեղ ներառական կրթության համակարգը զարգացած է, իսկ Հայաստանում դեռ զարգացման և կատարելագործման փուլում է, մեծ կարևորություն և նշակակություն ունի ԿԱՊԿ-ի ունեցող երեխաների կրթման, դաստիրակման, և հասարակության մեջ ներառման հիմնահարցը:

Մանկավարժական կրթության համակարգի բարեփոխումները, հասարակության մեջ սոցիալ-տնտեսական վերափոխումները, վերակազմավորումը, յուրաքանչյուր երեխայի կրթություն ստանալու իրավունքի առանձնակի կարևորումը, երեխայի կարողություններին համապատասխան կրթություն ստանալը պարտադիր և անհրաժեշտ շեշտադրում են կատարում ներառական կրթության համակարգում,

որպեսզի ստեղծվի, մշակվի ու կատարելագործվի ԿԱՊԿ ունեցող աշակերտների կրթության և դաստիրակություն ստանալու ուղիները:

Կարևոր նշանակություն է ձեռք բերում դպրոցներում աշակերտների ուղղվող աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու կառավարումը: Սակայնռ նմանատիպ հիմնախնդրի տեսական և գործնական անբավարար մշակվածությունն էապես դժվարացնում է դպրոցներում ներառական կրթության կարիք ունեցող աշակերտների ուսուցումը, շտկումը և զարգացումը, ինչպես նաև մանկավարժական մոտեցումների կազմակերպման ու անցկացման աշխատանքերը:

Ներառական կրթության առանձնահատկությունները, կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող աշակերտների կարողությունների ու հմտությունների զարգացման արդյունավետ միջոցների, մեթոդների և պայմանների ուսումնասիրումն փորձագիտական մշակումը կնպաստեն կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների արդյունավետ զարգացմանը, կրթմանն ու դաստիարակմանը, ինչն էլ որոշում է ուսումնասիրվող խնդրի արդիականությունը:

Ըստ ,,Հանրակրթության մասին,, օրենքի մինչև 2025 թվականը ՀՀ յուրաքանչյուր դպրոց պետք է դառնա ներառական կրթություն իրականացնող հաստատություն:

Հետազոտության նպատակը

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ԱՈՒՊ-ի դրական ազդեցությունը Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման գործում:

Հետազոտության խնդիրները

. Ուսումնասիրել ներառական կրթության իրագործման ժամանակակից մեթոդները, օրենսդրական դաշտը:

. Ուսումնասիրել ՀՀ-ում ներառական կրթության կառավարման մակարդակը:

.Զարգացնել Հայաստանում կրթության առանձնահատուկ կարիք ունեցող աշակերտների հետ կրթության կազմակերպումը:

Գլուխ 1

1.1 Անհատական ուսուցման պլան (ԱՈՒՊ)

ԱՈՒՊ-ը հաստատված ձևաչափային համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա: ԱՈՒՊ-ը կրթության առանձնահատուկ պայմաններ ունեցող սովորողի կրթության հիմքն է:

ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր դժվարություններ ունեն կրթության մեջ:Նրանք չեն կարողանում յուրացնել համապատասխան ծրագրային պահանջները: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մոտ առկա են հետևյալ խնդիրները՝

. ձայն և խոսք

. տեսողություն

. լսողություն

. մտավոր

. շարժողական:

ԱՈՒՊ-ում նախանշված կրթական ծառայությունները մատուցվում են սովորական դասարաններում՝ դասընթացի ժամանակ՝ ուսուցիչների կողմից, իսկ մասնագիտական ծառայությունները՝ համապատասխան սենյակներում մանկավարժահոգեբանական անձանց կողմից: Որոշ սովորողներ կարող են ունենալ ԱՈՒՊ միայն մեկ առարկայի համար, իսկ մյուսները, բացի մասնագիտական ծառայություններից, կարող են ունենալ ԱՈՒՊ ակադեմիական բոլոր առարկաների համար: Կարող են լինել նաև սովորողներ, որոնց համար ԱՈՒՊ-ում որևէ առարկայական չի հարմարեցվի:

Սովորողի ԱՈՒՊ-ի և նրա անձնական կյանքի տվյալները գաղտնի են և չեն փոխանցվում երրորդ անձի՝ առանց ծնողի գրավոր համաձայնության, հնարավոր է միայն ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ԱՈՒՊ-ի մշակման թիմում ընդգրկված են՝

. դասավանդող ուսուցիչները

. մանկավարժահոգեբանական անձինք

. ուսուցչի օգնականը

. սովորողը

. սովորողի ծնողը

. դպրոցի տնօրենը

. դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը:

Այս մարդիկ պետք է աշխատեն որպես մեկ ամբողջություն՝ կազմելու և մշակելու համար սովորողի ԱՈՒՊ-ը:

1.2 ԱՈՒՊ-ի լրացման կարգը

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և վկայագրման գործընթաց, Հանրակրթության մասին ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՀ 200-Ն օրենքի համաձայն, իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում, ինչպես նաև՝ երբ երեխայի մոտ ուսումնառության ընթացքում, արտակարգ իրավիճակներում պայմանավորված նկատվում են կայուն դժվարություններ: Գնահատումը իրականացվում է երկու փուլով.

1. Դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:
2. Տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով պայմանավորված կրթության առանձնահատուկ պայմանի կարիք:

Հաշվառված երեխայի առաջընթացը կամ հետընթացը գնահատելու համար յուրաքանչյուր տարի իրականացվում է կրթության առաձնահատուկ պայմանների կարիքի վերագնահատում՝ տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության խմբի հետ համատեղ:

Երեխայի ԿԱՊԿ-ի գնահատման նպատակն է.

. ապահովել ծրագրային, մեթոդական և այլ միջավայրային անհրաժեշտ

հարմարեցումներ

. ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրել ֆինանսավորման բարձրացված

չափաքանակ

. սահմանել մանկավարժահոգեբանական աջակցության ծառահությունների մակարդակը, ծավալները և տևեղությունը:

Տարածքային կենտրոնի կողմից երեխայի գնահատման գործընթացը համակարգում է Տարածքային կենտրոնի տնօրենի տեղակալը: Փաստաթղթերը ստանալուց հետո

նշանակում է գնահատում, սկսելու օրը՝ առավելագույնը 10 օրյա ժամկետում, որի մասին տեղեկացնում է դպրոցի տնօրինությանը: Այս գործընթացը տևում է մեկ շաբաթ:

Երեխայի ԿԱՊԿ-ի երկրորդ մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով կենտրոնի տնօրենի հրամանով ձևավորվում է գնահատող մասնագետների խումբ:

Լինում է այնպիսի դեպքեր, երբ ծնողը համաձայն չէ տարածքային կենտրոնի կողմից ***իր երեխային գնահատման արդյունքի հետ, այս դեպքում ծնողը կարող է բողոքարկել*** գնահատման արդյունքները և երեխային ներկայացնել Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված՝ անհատական ուսուցման պլանի օրինակ՝

Անհատական ուսուցման պլան

1. Սովորողի տվյալներ	1.5 Քաղաքացիություն
1.1 Ազգանուն, անուն հայրանուն	1.6 Բնակության հասցե
1.2 Ծննդյան վայր	1.7 ՈՒսումնական հաստատություն
1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ	1.8 Դասարան
1.4Սեռ	Ծնողների հեռախոսահամարները

Սովորողի մասին ընդհանուր տեղեկություններ

2.1 Հաշմանդամություն ունի թե ոչ
2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորում տարբեր ոլորտներում

1.3 Խորհուրդներ ԱՈՒՊ-Ի նպատակներն իրականացնողներին

Ինչպես նշվեց ներածական մասում ԱՈՒՊ-Ի յուրաքանչյուր անդամ իր նշանակությունն ունի ինչպես ԱՈՒՊ-ի լրացման կարգում, անյպես էլ յուրաքանչյուր ներառական կրթության կարիքը զգացող երեխաների համար: Ստորև ներկայացնենք քայլեր կամ խորհուրդներ, որոնք կնպաստեն ավելի մատչելի լրացվի ԱՈՒՊ-ը և կնպաստի նրանց աշխատանքին՝

. ԱՈՒՊ-ը միշտ կարող է փոփոխվել: Միշտ հնարավոր է վերանայել ԱՈՒՊ-ը և իրականացնել համապատասխան փոփոխություններ ուսումնական տարվա ցանկացած ժամանակահատվածում:

. Կարևոր է ԱՈՒՊ-ի ընթացիկ գնահատումների ընթացքում պարբերաբար պատասխանել այս հարցին՝ Իրատեսական են արդյոք սահմանված նպատակներն և արդյոք հնարավոր է սահմանված նպատակներն և արդյոք դպրոցն ավարտելիս սովորողին հնարավոր է հասցնել ԱՈՒՊ-ով սահմանված երկարաժամկետ նպատակ համապատասխան գիտելքիների, կարողությունների հմտությունների նվազագույն մակարդակին:

. Վստահ եղեք, որ նոր նպատակները հստակ են և և չափելի են: Համոզվեք ,որ սովորողի համար սահմանված են նոր նպատակները:

. ԱՈՒՊ-ը քննարկելիս սկսեք դրական հատվածից: Հանդիպումները երբեմն լարված կամ հուզական կարող են ընթանալ, ուստի կարևոր է ընդունել և ընդգծել այն կարողությունները և ունակությունները, որոնք սովորողը և որոնց վրա միայն հնարավոր կլնի ձևավորել նորերը:

. Եղեք խնդիր լուծող: ԱՈՒՊ-ի մշակմանը եկեք պատրաստ՝ առաջարկվող լուծումներով և գաղափարներով:

. Ներգրավվեք սովորողին: Սովորողների հետ խոսել այն մասին, թե որոնք են իր նախընտրած կամ ամենաքիչ սիրված առարկաները, որտեղ են նրանք լավ զգում,ինչ կատարելագործման կարիք ունեն, և ինչ են ակնկալում իրականացնել:

. Դարձեք տեղեկատվության սպունգ: Երբեմն դուք կարող եք ներգրավվել այն սովորողին, ում հետ դասավանդման փորձ չունեք: Եթե իրավիճակը այնպսիսն է, ապա հնարավուրություն ունեցեք կլանել որքան հնարավոր է շատ տեղեկատվություն: Այդ հանդիպումներին ներկա լինելը թույլ կտա պատկերացում կազմել այդ սովորողի հետ ճանապարհորդության ավելի մեծ պատկերի վերաբերյալ, ինչպես նաև նախկինում աշխատած կամ չաշխատող միջամտությունների վերաբերյալ:

. Համագործակցեք ծնողների հետ: ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլ կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելքիների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝շարունակելով այդ աշխատանքերը նաև տանը: Այդ աշխատանքը կարևոր է, որ ամեն ինչ սահուն և արդյունավետ ընթանա սովորողի համար ԱՈՒՊ-ի մշակումից հետո և ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Որպես սովորողի ուսուցիչ ձեր պարտականությունն ՝ համարվում անել այն ամենը, ինչը հնարավոր է, որպեսզի ընտանքիքի անդամները ներառվեն ԱՈՒՊ-ի պլանավորման և իրականացման մեջ:

ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում երեխայի դասավանդող ուսուցիչը կարևոր դերակատարում ունի դպրոցում գիտելիքների յուրացման, հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում

. Անհաժեշտ է համագործակցել հատուկ մասնագետների հետ: ՈՒսուցիչներին անհրաժեշտ են հմտություններ՝ ԱՈՒՊ-ում նպատակներ սահմանելու և իրենց դասերի ժամանակ դրանք արդյունավետ օգտագործելու համար: Մասնագետները փոխկապակցված համագործակցում են ուսուցիչների հետ մշակված ԱՈՒՊ-ը դասարանում գործողությունների վերածելու հարցում:

. Գնահատեք ԱՈՒՊ-ը: ՈՒսումնական տարվա ընթացքում սովորողի ուսումնական առաջընթացի գնահատում հաճախ է իրականացվում համոզելու

համար, որ սովորողը հասնում է ԱՈՒՊ-ում դրված նպատակներին: ԱՈՒՊ-ում սահմանված նպատակներն ու նպատակադրումները ցակացած պահի կարող են փոփոխվել՝ ըստ անհրաժեշտության:

Գլուխ 2

2.1 ՈՒսուցիչների աշխատանքը ԿԱՊԿՈՒ երեխաների հետ

Ուսուցիչների հետ կապված խնդիրը բարդ է և բազմաշերտ. Սա մի կողմից մասնագիտացված գործունեություն է: Մյուս կողմից ուսուցիչը ստանում է մի խնդիր, որը կատարել պատրաստ չէ: Նա գիտելիքի, պատրաստվածության պակաս ունի, նրան պարզապես չեն սովորեցրել աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: ԿԱՊԿՈՒ երեխան իրավունք ունի հաճախել իր բնակության վայրի դպրոց և ստանալ կրթություն: Անտեղյակության և գիտելիքների պակասի ֆոնին ուսուցիչը հարց է բարձրացնում. «Ինչու՞ պետք է ինքը սովորեցնի ԿԱՊԿՈՒ երեխաներին», կամ. «Եթե ես կատարեմ մի աշխատանք, որին պատրաստ չեմ, ինչպե՞ս դա կազդի իմ աշխատանքի որակի վրա»: Ուսուցիչները շատ աչալուրջ են վերաբերվում իրենց արդյունքներին, և նրանց նաև հետաքրքրում է, թե ինչ կստանան դրա դիմաց: Այստեղ առաջանում է մոտիվացիայի հարցը՝ ոչ միայն ներքին, այլ նաև արտաքին(Ֆինասական):Պետք է ֆինանսավորմամբ լուծել տարածաշրջանային խնդիրները, որպեսզի այն դասարանում, որտեղ երկու-երեք ԿԱՊԿՈՒ երեխաներ կան, ուսուցիչը հավելավճար ստանա: Մեզ դպրոցական խորհուրդ է պետք, որը կօգնի ուսուցչին: Քանի որ ԿԱՊԿՈՒ երեխաների ընդգրկումը դասապրոցեսին կկրի ձևական բնույթ, այսինքն երեխան ֆիզիկապես դասասենյակում է, բայց նա որևէ կերպ ներառված չէ համատեղ գործունեության մեջ, չի մասնակցում դասին, պարզապես չի ստանում իրեն հասանելի կրթությունը: Նման կրթությունը ներառական չէ:

Եթե դպրոցում բազմամասնագիտական թիմ չկա, ուսուցիչը մնում է մենակ, վախ է առաջանում՝ ի՞նչ անել, ինչպե՞ս սովորեցնել: Ուսուցիչը կամ հանձնվում է, կամ սկսում է սովորել: Նախկինում ուսուցիչները հաճախ պարզապես լքում էին դպրոցը: Հիմա սա այլևս տարբերակ չէ: Օրենքը պարտադրում է, պետք է հասկանալ, եթե ցանկանում է ուսուցիչը աշխատել իր մասնագիտությամբ, ապա պետք է սովորի

աշխատել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ: Պետք է շփվել ծնողների հետ ու հասկանալ, թե

ինչ մոտեցում է պետք երեխային: Ուսուցիչը պետք է մասնագիտական թեստ հանձնի, նոր բաներ սովորի: Եվ պարզ է, որ խնդիրը միայն աշխատավարձի բարձրացումը չէ, դա ոչ միայն նոր գիտելիքների, այլև բարոյական նոր արժեքների, մասնագիտական նոր նպատակների ձեռքբերում է: Ուսուցիչը հիմնական մարդն է, ով մեր կրթությունը դարձնում է կա՛մ ներառական, կամ ոչ, քանի որ ներառական կրթությունը ոչ թե քաղաքական խնդիր է, այլ առաջին հերթին մանկավարժական: Ուսուցչից շատ բան է կախված՝ հոգեկան վիճակից մինչև նրա գիտելիքները: Այսօր շատ կազմակերպություններ ուսուցիչներին նախապատրաստում են ներառման, ներառական դաս կառուցելու համար՝ կրթական զարգացման հաստատություններ, բարձրագույն ուսումնական հաստատություններ, հասարակական կազմակերպություններ:

Կարևոր է ուսուցչի պատրաստակամության երեք հիմնական բաղադրիչ.

- Իմանա երեխայի անհատական առանձնահատկությունները;
- Ընդունի այդ երեխային այնպիսին, ինչպիսին կա, կարողանա շփվել երեխայի հետ և ստեղծի իր հասակակից երեխաների հետ շփման ուղիներ:
- կետը կապված է այն բանի հետ, թե ինչպես են աշխատում ծնողների հետ:

Յուրաքանչյուր հինգերորդ ծնող դժգոհ է իր երեխային կրթական գործընթացում չընդգրկելու իրավիճակից: Սակայն երեխային գործընթացում ընդգրկելու համար անհրաժեշտ է ծնողների և դպրոցի միասնական աշխատանքը, մշտական երկխոսությունը և շփումը: Փոխարենը հաճախ է ի հայտ գալիս կոնֆլիկտ, որը խանգարում է աշխատանքին: Նույնքան կարևոր է նաև ուսուցիչների զինել գիտելիքներով ՝ ծնողների հետ աշխատելու և երեխաներին կրթական գործընթացում ընդգրկելու համար: Դպրոցի և ծնողների միջև առկա բացը, հարաբերությունների նկատմամբ անվստահությունը լրջորեն խախտում է ներառական գործընթացը: Ներառումը ավելի հաճախ է քննադատվում, քան խոսվում է այն մասին, թե ինչպես և ինու է դա կարևոր: Ներառումը պատմություն է ոչ թե ԿԱՊԿՈՒ, այլ բոլորիս մասին: Դասը դառնում է ներառական, երբ ուսուցիչը կարողանում է կազմակերպել երեխաների համատեղ գործունեությունը, առաջադրանքներ տալ բոլորին և տեսնել բոլորին: Կարևոր է նաև, որ ուսուցիչը իմանա, թե ինչպես է ընթանում զարգացումը, և ոչ միայն տիրապետի առարկայական նյութին: Դպրոցում մենք ոչ միայն գիտելիք ենք փոխանցում, այլև երեխային սովորեցնում ենք ճիշտ վերաբերվել իրեն, ուրիշներին ու աշխարհին: Հաջող ընդգրկման համար անհրաժեշտ են յուրաքանչյուր դպրոց ունենա բազմամասնագիտական թիմ՝ հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, լոգոպեդներ, որոնք իրենց աշխատանքերը կկատարեն ամենայն ճշգրտությամբ:

Ներառական կրթության գործընթաց իրականացնող յուրաքանչյուր դպրոցի համար մեծ կարևորություն ունի ԱՈՒՊ-ին վերաբերող աշխատանքները, քանի որ հետազոտությունների արդյունքները փաստում են, որ դպրոցներում ներառական

կրթության կառավարման գործում բարդություններ են առաջանում նաև դրա շուրջ, օրինակ՝ յուրաքանչյուր աշխատակցի անմիջական պարտականությունները, աշակերտի ուսումնական ծանրաբեռնվածության ծավալը և այլն, այնպես էլ ԱՈՒՊ-ի լրացմանը վերաբերող հարցերը:

Հետազոտության շրջանակում ուսումնասիրած մասնագիտական և գիտամեթոդական աղբյուրների վերլուծության արդյունքների հիման վրա մշակվել է աշակերտի անհատական ուսուցման պլանի հետևյալ ամբողջական գործընթացը՝ պարունակելով համապարփակ քայլերի հաջորդականություն, որով պիտի անցի յուրաքանչյուր Անհատական ուսուցման պլան՝

1. Աշակերտի զարգացման առաջնային գնահատում

2. Աշակերտի հոգեբանական, ֆիզիկական զարգացման բազմամասնագիտական

գնահատում

3. Անհատական ուսուցման պլանի մշակման և գործառույթների բաշխման խմբի

ստեղծում

4. Անհատական ուսուցման պլանի մշակում

5. Անհատական ուսուցման պլանի իրականացում

6. Անհատական ուսուցման պլանի մշտադիտարկում, դիտարկում և վերանայում

Ընհանրացնելով ներկայացված դրույթները՝ Անհատական ուսուցման պլանը

ներառական կրթության գործընթացում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ անհատական ուսուցման պլանի միջոցով հնարավոր է դառնում իրականացնել մի շարք կարևոր գործընթացներ ուղղված աշակերտի ուսումնադաստիարակչական, շտկողազարգացնող և այլ աշխատանքներին, առաջադիմությանը, ընդհանուր առմամբ ներառման արդյունավետությանը, առարկայական ուսուցիչների և բազմամասնագիտական թիմի, ծնողների համագործակցությանը և փոխգործունեությանը, որի արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողները այլևս չեն շարունակի մնալ թերտեղեկացված ներառական կրթության, Անհատական ուսուցման պլանի էության և հիմնական նպատակների մասին: Այսպիսով, ներառական կրթության կազմակերպման գործընթացի արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է հետևյալ գործոններով՝ աշակերտների առանձնահատուկ կրթական կարիքների բացահայտում և մասնագիտական գնահատում, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտի կրթական կարիքներին համապատասխան անհատական ուսուցման պլանի մշակում, աշակերտի հետ անմիջականորեն աշխատող մանկավարժական թիմի մասնագիտական բարձր որակ, «բազմամասնագիտական թիմ - առարկայական ուսուցիչներ» համագործակցություն, անհատական ուսուցման պլանների մշակմանը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ծնողների ակտիվ մասնակցություն և այլն:

Գլուխ 3.

Ընտանիքի դերը ներառական կրթության մեջ

Ընտանիքները որոշիչ դեր ունեն ներառական կրթության գործընթացում: Նրանք ականատեսն են երեխայի տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց փոխադրմանը: Այդ դեպքում ինչո՞ւ են ծնողները հաճախ փոքր դեր կատարում իրենց երեխաների կրթության գործում: Պատմականորեն ընտանիքին դուրս են մղել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից՝ նրանց հիմնականում թողնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույնը եղել է Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների միջև երկխոսությունը հաճախ շարունակում է հետևել առավել ավանդական, հիերարխիկ մոտեցմանը: Ծնողները կամ ընտանիքները հիմնականում ներկայանում են հանդիպումների՝ թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող որոշումները լսելու համար: Դպրոցը ծնողների հետ, որպես կանոն, կապվում է, երբ նրանցից որևէ բան է հարկավոր կամ երբ ինչ-որ բան է պատահել: Ընտանիքների դերի փոփոխությունը՝ պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից դեպի ակտիվ մասնակցողի, վճռական նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Այս փոփոխությունը կարևոր է, քանի որ ընտանիքները երեխայի մասին տիրապետում են առավել հարուստ տեղեկատվության, քան մասնագետները և գիտեն ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու գնահատականները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն, հիմնականում, մնում է որպես չօգտագործված ռեսուրս: Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ընտանիքների և մասնագետների առաջին հանդիպումը տեղի է ունենում մանկավարժահոգեբանական գնահատմժամանակ: Ընտանիքներն այս թիմի անդամներն են և մասնակցում են քննարկումներին, խորհրդակցություններին, հանդիպումներին և դասընթացներին: Ցավոք, ներառական կրթության համատեքստում մանկավարժներն ու ընտանիքները չունեն համագործակցության անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Մինչդեռ այդ համագործակցությունն էական նշանակություն ունի կրթության արդյունավետության հարցում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ, երբ ընտանիքներն ու մանկավարժները հանդես են գալիս որպես գործընկերներ, ավելի հավանական է դառնումբոլոր երեխաների ուսումնառության հաջող ընթացքը: Հետազոտության, ժամանակ քննության են առնվում աշակերտների առաջադիմությանը նպաստող պայմանները, մաթեմատիկայի և ընթերցանության գնահատականները բարելավվում են, երբ ուսուցիչներն սկսում են վստահել ծնողներին և նրանց հետ աշխատում են որպես գործընկերների:

ՈՒսուցիչների և ընտանիքների միջև հաղորդակցումը կրթական գործընթացի շատ կարևոր գործոն է, հատկապես ներառական կրթության համատեքստում: Կարևոր է

ընդունել, որ սա և՛ ընտանիքների, և՛ մասնագետների համար շփման նոր ձև է, քանի որ նրանց ավելի ծանոթեն աստիճանակարգային (հիերարխիկ) դերերը, երբ մասնագետները համարվում են փորձագետներ, իսկ ծնողներն ընդունում են կարծիքն ու բավարարվում քիչ հարցեր տալով: Ծանրության կենտրոնի այդպիսի փոփոխության համար պահանջվում է նոր վերաբերմունք և նոր հմտություններ: Այստեղ կարևոր դեր է խաղում հաղորդակցումը, որը պարզապես տեղեկություն հաղորդելը չէ և պահանջում է ամուր փոխհարաբերությունների հիմնում և ընտանիքներին՝ արդյունավետ թիմակիցներ դառնալու հնարավորության ընձեռում: Հաղորդակցումն արդյունավետ է այն դեպքում, երբ փոխանցված տեղեկատվությունը հասկանալի է ընտանիքի անդամների համար: Հաճախ,հանդիպումների ժամանակ, ընտանիքի անդամների համար ստեղծվում է տպավորություն, որ իրենք եկել են տեղեկատվություն ստանալու: Մասնագետները, հաճախ, հենց այդպես էլ վարվում են. փոխանցում են տեղեկատվություն երեխայի գնահատականների, ծրագրային նպատակների վերաբերյալ: Օգտագործվում է մասնագիտական բառապաշար, որը ոչ միշտ է հասկանալի ընտանիքի անդամներին: Հաղորդակցում տեղի չի ունենում: Մասնագտական բառապաշարի օգտագործումը ծնողներին ուղղված անուղղակի ուղերձ է առ այն, որ իրենք թիմի անդամ չեն և պարզապես եկել են իրենց երեխայի մասին լսելու: Ավելին, երբեմն հանդիպմանը ներկա է լինում մասնագետների մեծ խումբ, ստեղծվում են և մենք և դուք կողմեր, որոնք հաճախ հանդես են գալիս միմյանց դեմ: Ընտանիքում ստեղծվում է տպավորություն, որ իրենց կարծիքը չի գնահատվում: Երբեմն էլ ընտանիքներն են դեմ լինում թիմում ներգրավվելուն: Նրանք չեն պատկերացնում թիմում ներգրավվելու ընթացքը, իրենց դերը երեխայի հետ իրականացվելիք աշխատանքների պլանավորման մեջ՝ կարծելով, որ դա բացառապես մասնագետի կամ ուսուցչի անելիքն է: Ընտանիք-դպրոց կապի զարգացումը, ծնողներին թիմում ներգրավելը, էական նշանակություն է ունենում, ըստ որում, հաղորդակցումն այս գործընթացի առանցքային տարրն է: Հաղորդակցման ուժեղ հմտություններ զարգացնելու համար մասնագետները պետք է ուշադիր լսեն, փորձեն հասկանալ ու կիսել ընտանիքի մտահոգությունները: Ընտանիքներն իրենց հաճախ նսեմացած են զգում, եթե գործընթացի մեջ չեն ընդգրկվում կամ չեն ըմբռնում իրենց ներկայացված տեղեկատվությունը: Թիմի համար կարևոր է փորձել հասկանալ ընտանիքիառջև ծառացած խնդիրները՝ առանց նրանց քննդատելու կամ գերհոգածություն դրսևորելու: Ընտանիքի հետ հարաբերությունները կարող են ժամանակի ընթացքում սերտանալ, եթե ընտանիքը զգա, որ իրեն հասկանում են: Սովորաբար ծնողների և մասնագետների պատկերացումները հաղորդակցման միջոցների մասին տարբեր են:

Եզրակացություն

Ուսումնասիրելով անհատական ուսուցման պլանով աշխատելու կարևորությունը թեման եկանք այն եզրակացության, ԱՈԻՊ-ը որպես ԿԱՊԿՈԻ աշակերտի կրթության կազմակերպման հիմնական փաստաթղթերից մեկը մեծամասամբ համապատասխանում իրեն ներկայացված պահանջներին որպես կարևոր տեղեկատվական աղբյուր ներառական կրթության կազմակերպման մասին: ԱՈԻՊ-ը հնարավորություն է տալիս ինչպես կազմակերպել երեխայի կարքին համապատասխան կրթություն այլ նաև վերահսկել և գնահատել կատարված աշխատանքը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել երեխայի որակյալ կրթություն ստանալու իրավունքը:

ԱՈԻՊ-ը լրացնելիս հաշվի պետք է առնվի երեխայի նախասիրությունները ուժեղ և թույլ կողմերը, հիմնվելով երեխայի ուժեղ կողմերի վրա իրականացնել հոգեբանամանկավարժական աշխատանքեր թույլ կողմերը զարգացնելու նպատակով ինչը կապահովի կատարված աշխատանքի արդյունավետությունը:

Այսպիսով ԱՈԻՊ-ի կարևորությունը ներառական կրթության գործում շատ մեծ է, քանի որ այն ապահովում է ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը, աշակերտական կրթության ապահովումը երեխայի կարիքին համապատասխան:

Որպես **առաջարկություն** կարող ենք նշել ծնողների առավելագույն ներգրավածությանը ապահովումը՝ ինչպես ԱՈԻՊ-ի լրացման, այնպես էլ դրա իրականացման գործընթացին, որը կապահովի իրական հետադարձ կապ և, որպես արդյունք պարզ կլինի որքանով է կազմակերպված կրթական գործընթացը նպատակաուղղված և արդյունավետ եղել, ծնողի սպասելիքները կրթական գործընթացից և որքանով ենք դրանք իրականացել:

Օգտագործված գրականություն և հղումներ

1. Թադևոսյան Ս. Ներառական կրթության հաջողությունները և նոր մարտահրավերները Հայաստանի Հանրապետությունում:
2. Միքայելյան Օ. ՀՀ հանրակրթությունում ներառված սովորողի ձեռքբերումների գնահատման շուրջ: <<Դպրոցական հոգեբանական ծառայության հիմնախնդիրները>> գիտաժողովի նյութեր:
3. Ներառական կրթության ռազմավարություններ դասագիրք Երևան 2009:
4. Ներառական կրթության ուսումնամեթոդական ձեռնարկ Երևան 2017
5. https://hmk.am/wp-content/uploads/2021/03/IEP-tips-teachers.pdf
6. https://gevorgyanmarianna.wordpress.com/category/%D5%A1%D5%B8%D6%82%D5%BA-%D5%AB-%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6-%D5%A1%D5%B4%D5%A5%D5%B6-%D5%AB%D5%B6%D5%B9/
7. https://escs.am/am/static/inclusiveeducation?s=edu
8. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6
9. https://ekho.am/inclusive/

Հավելված
ԱՈՒՊ-ի օրինակ

ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի
դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի հավելված

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԼԱՆ
1. ՍՈՎՈՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐ
1.1 Ազգանուն, անուն, հայրանուն՝
1.2 Ծննդյան վայր՝ ք.
1.3 Ծննդյան օր, ամիս, տարեթիվ՝
1.4 Սեռը՝ □ իգական արական
1.5 Քաղաքացիությունը՝
1.6 Բնակության հասցեն՝
1.7 Ուսումնական հաստատությունը՝
1.8 Դասարանը (նշել ուսումնական տարին)՝ 2-րդ
1.9 Ծնողների (օրինական ներկայացուցիչների) անուններն ու հեռախոսահամարներ :
1.10 Արտակարգ իրավիճակների դեպքում՝ կապի միջոց՝ աշխատանքային և բնակարանի հեռախոսահամարներ
2. ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2.1 Հաշմանդամություն Ունի □ չունի
2.2 Բացառիկ ընդունակությունների դրսևորումը հետևյալ ոլորտներում _____ ____ ունի բացառիկ հիշողություն_____ _____
2.3 Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության աստիճանն ըստ սովորողի խոսքի և լեզվի, հաղորդակցման, լսողության, տեսողության, ինտելեկտի (մտավոր), հուզական, վարքի, շարժունակության հետ կապված խնդիրների:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք	**Աջակցության աստիճան**		
	1-ին	**2-րդ**	**3-րդ**
Խոսքի և լեզվի		✓	
Հաղորդակցման			
Լսողության			
Տեսողության			
Ինտելեկտի (մտավոր)		✓	
Հուզական			
Վարքի			

Շարժունակության				
2.4 ՍՈՎՈՐՈՂԻ ՆԿԱՐԱԳԻՐ				
				Աշակերտը7 տարեկան է: Բնակվում է ,,,,,,,,,,,,: Երեխան հաճախում է,,,,,,,,,,,,,,,,, դպրոց, սովորում է 2-րդ դասարանում: Ընտանիքը բաղկացած է 4 անդամից՝ հայրը, մայրը, քույրը և Էրիկը: Մայրն ունի միջնակարգ կրթություն, չի աշխատում: Հայրն ունի միջին մասնագիտական կրթություն, աշխատում է: Ծնողը առաջարկում է, որպեսզի երեխայի հետ աշխատանքներ իրականացնի մասնագիտական թիմը: Երեխան ունի դժվարություններ «Սովորել և գիտելիքը կիրառել» , «Ընդհանուր առաջադրանքներ և պահանջներ», «Հաղորդակցում», «Շարժունակություն», «Ինքնասպասարկում», «Կենցաղ», «Միջանձնային շփում և փոխհարաբերություններ», «Կյանքի հիմնական բնագավառներ», «Համայնքային, սոցիալականքաղաքացիական կյանք» ոլորտներում: Երեխայի մտավոր զարգացման մակարդակը չի համապատասխանում տարիքային զարգացման չափանիշներին: Աշակերտի մոտ դժվարություններ են նկատվում ընկալման ոլորտում: Առօրյայում հաճախ օգտագործվող և իրեն ծանոթ պարզ հրահանգներն ընկալորում և կատարում է, իսկ անծանոթ կամ բարդ հրահանգների դեպքում երեխան ցուցաբերում է անտարբերություն՝ զբաղվելով այլ աշխատանքով. հարկավոր է մասնագետի մշտական աջակցություն և հրահանգների պարզեցում: Աշակերտը դժվարություններ ունի ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելիս: Նպատակաուղղված գործողություն իրականացնելիս մշտապես ունենում է որոշակի դժվարություններ: Իրադարձությունների միջև պարզ պատճառահետևանքային կապերը հասկանալու համար հարկավոր է մեծահասակի մեծ աջակցություն: Աշակերտը կարողանում է կատարել պարզ առաջադրանքներ սակայն մի քանի, հաջորդական գործողություն պարունակող առաջադրանքները կատարելու և ավարտին հասցնելու համար անհրաժեշտ է մասնագետի մշտական աջակցություն և հրահանգի բազմակի կրկնում: Ճանաչում և նպատակային է օգտագործում իրեն ծանոթ և առօրյայում օգտագործվող առարկաները: Աշակերտի ուշադրությունն անկայուն է, ցրված: Արտաքին ազդակներից շուտ շեղվում է, սկսած աշխատանքին վերադառնալու և ավարտին հասցնելու համար ունենում է մեծ աջակցության կարիք: Մտապահման, պահպանման գործընթացներում նկատվում են թեթևակի դժվարություններ: Վերարտադրման գործընթացները դժվար են ընթանում: Ստացած նոր, պարզ ինֆորմացիան (լսողական և տեսողական) մտապահելու համար հարկավոր է մի քանի անգամ կրկնել: Կարողանում է կատարել պարզ մտահանգումներ մասնագետի աջակցությամբ: Երեխայի տարիքային տեղեկացվածությունը չի համապատասխանում տարիքային զարգացման չափանիշներին: Գիտի իր անունը, սակայն կարող է չարձագանքել իրեն դիմելիս: Ճանաչում է մրգերն ու բանջարեղենը քարտերով: Կարողանում է խմբավորման և ընդհանրացման աշխատանքներ իրականացնել ըստ մեկ հատկանիշի, միայն քարտերի օգնությամբ: Երեխան մեխանիկորեն կարողանում է թվարկել տարվա եղանակները, ամիսները, շաբաթվա օրերը, սակայն չի կարողանում ըստ որևէ հատկանիշի երևույթների միջև գտնել նմանություն և տարբերություն: Դժվարություններ են նկատվում առարկաները և երևույթները համեմատելիս, ինչպես նաև օրինաչափությունները գտնելիս: Երեխան գունաճանաչ է, ճանաչում է երկրաչափական պատկերները, սակայն անվանելիս կարող է շփոթել: Կարողանում է առանձնացնել մեծն ու փոքրը: Երեխայի կարդալու հմտությունները զարգացած են: Ճանաչում է տառերը, կարդում է վարժ: Գրելիս նկատվում են դժվարություններ՝ հարկավոր է մեծահասակի աջակցություն:Երեխան չի ճանաչում տողը, գրում է մեծ, անհամաչափ: Մաթեմատիկական հմտություններն ունեն զարգացման կարիք: Կարողանում է մեխանիկորեն հաշվել մինչև 10-ը, սակայն դժվարանում է թվերի հետ կատարել որևէ մաթեմատիկական գործողություն (գումարում, հանում): Դժվարանում է լուծել մեկ պահանջից բաղկացած պարզ խնդիր: Երեխան դժվարանում է պահպանել դպրոցում սահմանված կարգուկանոնը: Դասապրոցեսին անընդհատ տեղաշարժվում է, դժվարանում է տարբերակել դասը դասամիջոցից: Իրեն հանձնարարված պարզ առաջադրանքն ավարտին հասցնելու համար հարկավոր է մասնագետի հրահանգային ուղղորդում և աջակցություն: Խմբի ներսում առաջադրանքի իր մասն ավարտին հասցնելու համար, ինչպես նաև առարկայական դասաժամերին մասնակցություն ցուցաբերելու համար անհրաժեշտ է մեծահասակի անմիջական, մշտական հսկողություն և հրահանգավորում: Գրաֆիկի փոփոխության դեպքում կարող է նեղվել, լացել: Վարքային դրսևորումներն երբեմն չեն համապատասխանում իրավիճակին: Հաղորդակցման ոլորտում երեխան ունի դժվարություններ: Աշակերտի բառապաշարը, վերարտադրման գործընթացները չեն համապատասխանում տարիքային զարգացման չափանիշներին: Կապակցված խոսքն ունի զարգացման կարիք: Աշակերտը, բայց իրեն ծանոթ, հաղորդագրություններն ընկալում և կատարում է: Գրավոր հաղորդագրությունները կարողանում է ընթերցել, սակայն ընթերցածը դժվարանում է ընկալել և վերարտադրել: Աշակերտը դժվարանում է նաև երկխոսություն սկսել, շարունակել և ավարտել: Բառեր

				արտաբերելիս երեխան ունենում է որոշ հնչյունների փոխարինումներ ինչպես օրինակ՝ «լ»-ն փոխարինում է «ն»-ով, «ս»-ն փոխարինում է «զ»-ով, փոխարինումներ են նկատվում նաև «ջ-ճ-չ» հնչյուններն օգտագործելիս: Նկատվում են լսած հրահանգների, բառակապակցությունների կամ պարզ նախադասությունների կրկնումներ: Բառապաշարն ունի հարստացման կարիք: Մանր և խոշոր շարժունակության ոլորտում երեխայի մոտ նկատվում են որոշակի դժվարություններ. թույլ են զարգացած դաստակի և մատների շարժումները: Երեխան գրիչը ինքնուրույն դժվարանում է ճիշտ բռնել, հարկավոր է մեծահասակի ուղղորդում: Գիտի մկրատի նպատակային օգտագործումը, սակայն չի կարողանում այն ճիշտ բռնել և հստակ կտրել: Խոսքային ուղղորդմամբ և աջակցությամբ կարողանում է ծեփամածիկով պատրաստել գունդ: Կարողանում է ինքնուրույն տեղաշարժվել, քայլելիս պահպանում է մարմնի դիրքը, կքանստում է, ցատկոտում: Թեթևակի դժվարություններ են նկատվում ուղիղ գծով քայլելիս, հարկավոր է հենարան: Աստիճաններ բարձրանում է առանց աջ և ձախ ոտքերը հերթափոխելու՝ մեկ-մեկ: Ինքնասպասարկման հմտությունները ձևավորված են՝ ունեն զարգացման կարիք: Երեխան ինքնուրույն ուտում է, սակայն հագնվելիս, լվացվելիս, սանհանգույցից օգտվելիս, լոգանք ընդունելիս ունենում է ծնողի մեծ աջակցության կարիք. բնական կարիքների մասին տեղյակ չի պահում: Երեխան չունի վախի զգացողություն, չի գիտակցում վտանգը: Անհրաժեշտ է մեծահասակի անընդհատ հսկողություն: Նախաձեռնողականություն չի ցուցաբերում տնային գործեր կատարելիս, սակայն իր նախընտրած կենցաղային աշխատանքը կարող է հասցնել ավարտին: Տրանսպորտից օգտվում է մայրիկի օգնությամբ: Չի ճանաչում գումարը, գնումներ չի կատարում: Շփման հմտությունները ձևավորված չեն: Շփում չի նախաձեռնում, սակայն իր ցանկությունների բավարարման համար կարող է մոտենալ և՛ հասակակիցներին, և՛ մեծահասակներին, բռնելով նրանց ձեռքը ուղղորդել դեպի իր ցանկության օբյեկտը, որի ընթացքում կարող է արտաբերել բառ կամ բառակապակցության: Խմբային աշխատանքներ կազմակերպելիս նախաձեռնողականություն չի ցուցաբերում, ներգրավվելու համար հարկավոր է մեծահասակի մշտական խոսքային ուղղորդում և շարժումների կառավարում: Մասնակցում է դպրոցում կազմակերպվող խաղային, ժամանցային միջոցառումներին, մասնագետի անմիջական աջակցությամբ և ուղղորդմամբ: Սիրում է կարդալ և նայել նկարազարդ գրքեր: Երեխան համայնքում կողմնորոշվում է մեծահասակի աջակցությամբ: Բակ դուրս է գալիս ծնողի հետ: Չի համագործակցում երեխաների հետ: Բակային խաղերին ցանկանում է մասնակցել, սակայն խաղի կանոնները չի պահպանում: Անհրաժեշտ է հոգեբանի, հատուկ մանկավարժի, լոգոպեդի և էրգոթերապիստի աջակցություն: